ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (1915-1916թթ.)

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Տ. Ն.

Առաջին աշխարհամարտի սկիզբը կանխորոշեց և պայմանավորեց երիտթուրք ղարդարարների կողմից կանխապես մշակված ողջ Օսմանյան Թուրքիայի տարածքում բնակվող հայ ազգաբնակչության ընաջնջման կազմակերպումն ու իրականացումը: Պատմագրության մեջ գոյություն չունի միանշանակ տեսակետ, թե ի վերջո, ե՛րբ ոճրագործ երիտթուրք ղարգարարները գործողության մեջ դրեցին այդ ծրագիրը՝ հրահանգավորելով Թուրքիայի ոզջ տարածքում բնակվող հայ տարրի ցեղասպանության սկիզբը: Ընդհանուր շրջանառության մեջ դրված՝ 1915թ. ապրիլի 15-ի Էնվերի, Թալեաթի և Նազիմի հրամանը՝ արձակված Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ղեկավարներին՝ «...որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով Հայկական հարցի դրվելը կանխելու համար, որոշեցինք վերջնականապես լուծել այն՝ բնաջնջելով այդ անհարազատ տարրը»[1], հարց է առաջացնում ինչու՞ համընդհանուր սպանդը սկսվեց ապրիլին և ոչ ավելի վաղ: Դրանից քիչ անց, ապրիլի 24-ին, սկսվեց 800 հայ մտավորականների՝ խորհրդարանի անդամների, թերթերի խմբագիրների, բարձրաստիճան եկեղեցականների, գրողների, ուսուցիչների ձերբակալումը, բռնագաղթը, այնուհետև ամենադաժան միջոցներով սպանդը: Ազգի հոգևոր գլխատումն էլ հետագայում պայմանավորեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա սահմանումը[2]: Համաձայն որոշ փաստերի, ապրիլի 24-ին միայն Կ.Պոլսում իրականացված հայ մտավորահավաքին և ոչնչացմանը զոհ են գնացել 2345 մարդ[3]:

Զեյթունի և Կիլիկիայի հայության տեղահանման նպատակով դեպի այդ շրջանը Հալեպից Թուրքական զորամասերը ճանապարհ էին ընկել դեռևս մարտի կեսերին, իսկ տեղահանումը սկսվեց և իրականացվեց ապրիլի 8-10-ը: Այս և նմանօրինակ ոճիրների վերաբերյալ ժամանակագրական հղումները օգնում են պատասխանելու վերը բարձրացված հարցին: Այն սերտորեն կապված է տերությունների, մասնավորապես Օսմանյան կայսրության նկատմամբ Անդլիայի վարած ռազմադիվանագիտական քաղաքականության և այն բարենպաստ պայմանների հետ, որն այդ ռազմադիվանագիտությունն ընձեռեց երիտթուրք ոճրագործներին՝ կենսագործելու իրենց ծրագիրը ցեղասպանությունը:

Ռազմադիվանագիտական այդ տապալված արկածախնդրությունը Առաջին աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի դեմ անգլիացիների նախաձեռնած Դարդանելի ռազմական արշավանքն էր:

---

[1] Bryce J. and Toynbee A., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, London, 1916, p. 2.

[2] Adalian Rouben P., Remembrance and Understanding the Armenian Genocide, Yerevan, 1995, p. 17, նաև՝ Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквозь призму десятилетий, Е., 1995, с. 24-25.

[3] Dadrian Vahakn N., The History of the Armenian Genocide, p. 221, նաև՝ Uras E., Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Istanbul, 1976, p. 612.

Թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամի կարծիքով, Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմները և կառույցները ստեղծվեցին դեռևս 1914թ. օգոստոսի 2-ին, երբ «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության կենտրոնական կոմիտեի Հատուկ ժողովում որոշվել էր ստեղծել «Թեշքիլաթի մահսուսեն» («Հատուկ կազմակերպությունը»), որը գործում էր պաշտպանության նախարարության կազմում և դառնալու էր Հայերի ոչնչացման Հիմնական և կործանիչ ուժը[4]*: Հատուկ կազմակերպության ստեղծման Հաջորդ օրը թուրքական իշխանությունները տարբեր փուլերով զորակոչեցին 18-60 տարեկան 60 000 Հայ տղամարդկանց՝ ծառայություն մատուցելու «ընդՀանուր» օսմանյան Հայրենիքին: Այս փաստը նույնպես գալիս է մեկ անգամ ևս մատնանշելու ոճրի ծրագրավորման և իրականացման դեռևս վաղ գաղափարական սաղմնավորման մասին*[5]*: Այս քայլն առաջին Հերթին ուղղված էր Հայ ազգաբնակչության մեջ դիմադրողականության վերացմանը: Շինարարական զորամասեր և Հիմնականում թուրքական բանակի ոչ մարտական ջոկատներ զորակոչված Հայ զինապարտների ոչնչացումը սկսվեց 1915թ. փետրվարին*[6]*, ճիշտ այն ժամանակ, երբ անգլիացիների նախաձեռնած՝ Դարդանելի արշավանքը տխուր վախճան ունեցավ վերջիններիս Համար: Եթե Հայկական Հարցում XIX դ. վերջին և XX դ. սկզբին անգլիական ավանդական քաղաքականությունը պատճառ էր դարձել արևմտաՀայության տարերային, ոչ Համատարած կոտորածների Համար, ապա Առաջին աշխարՀամարտում դառնալու էր ազգի ՀամընդՀանուր և ծրագրավորված բնաջնջմանը նպաստող գործոններից մեկը: Նախասկիզբը, որքան էլ որ տարօրինակ թվա, Դարդանելի արշավանքն էր և անգլիացիների խայտառակ պարտությունը: Այս առթիվ* «Армянский вестник»*-ը գրում է. «Սարիղամիշի ջախջախումը, որը թուրքերի կողմից վերագրվում է Հայերին, ունեցավ ողբերգական Հետևանքներ»*[7]*: Հայերի դեմ 1915թ. Հունվարին սկսվեցին Հալածանքները, Հայ զինվորներին զինաթափեցին ու ոչնչացրին: Դրան Հաջորդեց Դարդանելում անգլիացիների պարտությունը, որը Թուրքիային ներշնչեց Հաղթանակի Հույս, ուստի Հայերի դեմ ծրագրավորված ոճիրների իրականացման դեպքում՝ անպատժելիության գաղափար*[8]*:*

Թուրքիային պատերազմ Հայտարարելուց անմիջապես Հետո Ռուսաստանի դաշնակից Անգլիայի ռազմածովային ուժերի նախարար Ու. Չերչիլը 1914թ. օգոստոսին Հայտնեց նեղուցները Հունական ուժերի միջոցով գրավելու գաղափարը[9]*: Նրա ընդդիմախոս ծովակալ Ֆիշերը նշում էր, որ Դարդանելի ամրոցների վրա Հարձակումը որևէ Հաջողության Հույս չի կարող ներշնչել*[10]*, և դեպի Կ. Պոլիս առաջանալու Համար Հարկավոր է առնվազն 100 Հազար զինվոր, որ դա «փորձը փորձանք չէ» սկզբունքով առաջնորդվող արկածախնդրություն է: Ի վերջո, անգլիական ռազմածովային ուժերի մասնագետները ստիպված էին*

---

[4] *Akcam Taner, Dialogue Across an International Divide: Essays Towards Turkish-Armenian Dialogue, Cambridge and Toronto, 2001, p. 44.*

[5] *Худавердян К., Саакян Р., նշվ. աշխ., էջ 23:*

[6] *Adalian Rouben P., նշվ. աշխ., էջ 17:*

[7] *Армянский вестник, 12. III. 1917, N 10-11, с. 15.*

[8] *Նույն տեղում:*

[9] *Churchill W., World Crisis, vol. II, London, 1929, p. 485-495.*

[10] *Fisher John, Memoirs and Records, vol. I, New York, 1920, p. 72 and 82, տե՛ս նաև Corbett Julian S., Naval Operations, vol. I, London, 1920, p. 154, տե՛ս նաև Grey Ed., Twenty Five Years, 1892-1916, vol. II, London, 1925, p. 78-80, տե՛ս նաև Churchill W., նշվ. աշխ., էջ 185-186:*

տեղի տալ «նեղուցների տիրապետման» քաղաքական ցանկությանը, որի գլխավոր ջատագովը նախարար Ու. Չերչիլն էր[11]: Դարդանելի դեմ ուղղված արշավանքի սկզբնական ծրագիրը ծովակալությունը կառավարությանը ներկայացրեց 1914թ. նոյեմբերի 25-ին՝ առաջամանակ մնալով անուշադրության մեջ[12]:

1915.թ հունվարի սկզբին ռուսական բանակին կցված անգլիացի գեներալ Հենբերրի Վիլյամսին մեծ իշխան Նիկոլայի հետ հանդիպման ժամանակ ծանուցում են, որ Թուրքիայի դեմ կռվող Կովկասյան ճակատի ռուսական բանակը օժանդակության կարիք է զգում[13]: Արդեն հունվարի 2-ին Պետերբուրգում հավատարմագրված Անգլիայի դեսպան Ջորջ Բյուքանանը հեռագրում է Լոնդոն՝ նշելով, «որ մեծ իշխանը հարցնում է, թե արդյո՞ք լորդ Քիթչենների համար հնարավոր է մշակել Թուրքերի դեմ որևէ վայրում ծովային կամ ցամաքային գործողության իրականացումև ...ստիպել Թուրքերին՝ հեռացնելու իրենց ուժերի մի մասը», որն ուղղված էր Կովկասում ռուսների դեմ և դրանով թեթևացնել վերջիններիս դրությունը[14]: Հաջորդ օրը Ու. Չերչիլին հղած գրության մեջ Քիթչենները նշում է, որ ինքը բացասաբար է վերաբերվում այն կարծիքին, որ «իրենք կարող են որևէ բան կատարել, որը շատ լրջորեն կարող է օգնել ռուսներին Կովկասում»[15]: Այնուամենայնիվ, հունվարի 3-ին Լոնդոնից Բյուքանանին ուղղարկված նամակում պատվիրվում էր հավաստիացնել մեծ իշխանին, որ Թուրքերի դեմ իրականացվելու են ռազմական գործողություններ՝ ավելացնելով, որ դա ռուսներին շատ չնչին օժանդակություն է բերելու Կովկասում[16]:

Դեռևս 1914թ. նոյեմբերի սկզբներին Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը Եգիպտոսի անգլիական զինվորական իշխանություններին ներկայացրեց Թուրքիայի դեմ իրականացվելիք ռազմական գործողությունների մասին իր մտորումները, ըստ որում, առաջարկելով, «որպեսզի զորք հանվի Կիլիկիո ծովեզերքը Մերսինի և Ատանայի դաշտը», խոստանալով անգլիական բանակի տրամադրության տակ դնել «պետք եղած թվով և երկրին ծանոթ ռահվիրաներ, թարգմաններ և պրոպագանդիստներ»[17]: Այս ամենը պետք է իր մասնաբաժինը բերեր դաշնակիցների հաղթանակին, պայմանով, որ հայ ժողովրդին տրամադրվելիք զենքն ու զինամթերքը պետք է ապահովեին դաշնակիցները:

Երբ ցեղասպանությունն արդեն ընթացքի մեջ էր, 1915թ. հուլիսի 15-ին Պողոս Նուբարը Գևորգ V կաթողիկոսին հղած նամակում գրում է, որ իր ծրագիրը «Թուրքերը կչեզոքացներ, ի դերև կաներ հայ տարրի բնաջնջման մասին Թուրքերու հետապնդած ծրագիրը, իսկ մյուս կողմե հայկական ապստամբական շարժումով ավելի կշիռ կբերեր Կիլիկիո մասին մեր ունեցած բաղձանքներուն»[18]:

[11] Fisher John, նշվ. աշխ., էջ 94:

[12] Howard Harry N. The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923, Norman, University of Oklahoma Press, 1931, p. 122.

[13] Williams J. H., The Emperor Nicholas as I Knew Him, London, 1922, p. 23-28.

[14] Arthur George, Life of Lord Kitchener, vol. III, New York, 1920, p. 100-101.

[15] Նույն տեղում:

[16] Churchill W., նշվ. աշխ., էջ 87:

[17] Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 44-45:

[18] Նույն տեղում:

Սակայն, ինչպես պատմական բոլոր շրջաններում, այնպես էլ այժմ, անգլո-ֆրանսիական ռազմաքաղաքական դաշինքի ծրագրերը ոչ մի ընդհանրություն չունեին հայ ժողովրդի հետամտած ազգային որևէ բաղձանքի հետ և, 1915թ. հունվարի 13-ին անգլիական պատերազմական խորհուրդը որոշում կայացրեց գրոհել Դարդանելը: Մովակալությունը պետք է «նախապատրաստեր արշավանքը իրականացնել փետրվարին՝ ոմբակոծել և գրավել Գալիպոլիի թերակղզին՝ որպես նպատակ ունենալով Կ. Պոլիսը»[19]: Դարդանելի վրա հարձակմամբ և Կ. Պոլիսի գրավմամբ Մեծ Բրիտանիան ակնկալում էր Թուրքիայի նկատմամբ իր համար ամենաբարենպաստ պայմաններով պատերազմի արագ ավարտ: Դրանով նա վերացնում էր Եգիպտոսին սպառնացող վտանգը, անվտանգ էր դարձնում Բալկանյան թերակղզին, արաբներին վերջնականապես կողմնորոշում էր դեպի Անգլիան և վերջակետ էր դնում Իտալիայի՝ Անտանտին միանալու երկարաձգվող գործընթացին[20] և, վերջապես, տիրանում էր Մերձավոր Արևելքում գերիշխանության տանող ճանապարհի հանգուցակետ Կ. Պոլսին:

Նախքան Դարդանելի արշավանքը սկսելը, անգլիական կառավարության սեղանին էր դրվել ոչ միայն Ռազմածովային ուժերի նախարար Ու. Չերչիլի (Ու. Չերչիլ-Լ.Ջորջ) ծրագիրը, այլև դրան հակադիր Հերբերտ Հորացիոս Քիթչեներինը: Համաձայն առաջին ծրագրի, առաջարկվում էր «ռազմանավերով ճեղքել նեղուցները և նույն ատեն ցամաքահանում ընել Կալիփոլի», ապա սրընթաց գրավել Կ. Պոլիսը՝ նպատակ ունենալով ծովային անմիջական կապ հաստատել դաշնակից Ռուսաստանի հետ՝ Ավստրո-Հունգարական կայսրության դեմ Բալկաններում բանալով նոր ռազմաճակատ: Անգլիայի պաշտպանության նախարար Քիթչեները, անհնարին համարելով Կ.Պոլսի գրավումը, առաջարկում էր մի կողմ դնել «նեղուցներէն զարնելու ծրագիրը»: Ավելին, նա դյուրին էր համարում Իսկանդերի ծոցում ափհանումը, այնտեղից անմիջապես Անտիոքի դաշտ խուժումը, ապա՝ առաջանալով հյուսիս-արևելք՝ Դիարբեքիրի և Վանի վիլայեթներում ռուսական բանակներին միացումը: Դաշնակիցները, Օսմանյան կայսրությունը բաժանելով երկու մասի, կմեկուսացնեին Ջեմալ փաշայի հարավային բանակը և ռուսական բանակի հետ մտնելով Անատոլիա՝ անկաշկանդ կերպով ցամաքից անարգել կգրավեին Կ.Պոլիսը և կապահովեին պատերազմում Թուրքիայի պարտությունը՝ անվերապահ պայմաններով: Անգլիայի հետամտած արտաքին քաղաքական այլ նպատակների պատճառով, սակայն, կառավարությունը հունվարի 13-ի քվեարկությամբ, մեկ-երկու ձայների տարբերությամբ «որդեգրեց Չերչիլ-Լոյտ Ջորջի առաջարկը և ընթացավ դեպի աղետ»[21]: Այդ մեկ-երկու ձայներն էին, որ «կնքած եղան արևմտահայ զանգվածներու ճակատագիրը»[22]:

Անգլիական կառավարության ծրագրի վերաբերյալ ռուսական կողմը տեղեկացվեց որոշումն ընդունելուց մի քանի օր անց՝ հունվարի 19-ին[23]: Հանկարծակիի եկած Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը դաշնակցին խնդրեց հետագա արշավանքում ապահովել ռուսական ռազմածովային ուժերի համապատասխան մասնակցությունը, եթե ոչ՝ հետաձգել արշավանքը[23]:

---

[19] Howard Harry N., նշվ. աշխ., էջ 122:

[20] Նույն տեղում, էջ 121:

[21] Ահարոնյան Գերսամ, Մեծ երազի ճամփուն վրա, Լոս-Անջելես, 1986, էջ 61:

[22] Զարթոնք, 10. V. 1964:

[23] Churchill W., նշվ. աշխ., էջ 113-114:

Ռուսաստանի հետ համագործակցության փոխարեն Ու. Չերչիլը գտավ դրա այլընտրանքը՝ Ֆրանսիայի մասնակցության երաշխիքը, որը ձեռք բերվեց 1915թ. փետրվարին[25]: Դարդանելի ափերին անգլիական նավատորմի կործանումից հետո էլ, ընդհուպ մինչև 1915թ. դեկտեմբերի 5-ը, Քիթչենները պնդում էր Ալեքսանդրեթի ափին ռազմական գործողությունների հաջողության վրա. այդ օրը Շանթիեում (Ֆրանսիա) կայացած դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների համաժողովում ֆրանսիական ճնշման ազդեցությամբ որոշվեց վերջնականապես հրաժարվել Քիթչենների ծրագրից՝ առաջնորդվելով «ֆրանսիական բանակը տնտեսելու և խնայելու դիրքորոշումով»[26]: Քիթչենների ծրագիրը «Կիլիկիայի բնաջնջվող հայության համար էական, կենսական և հիրավի փրկարար նշանակություն» ուներ[27]: Մեր կարծիքով, ոչ միայն այդ շրջանի հայությունը կկարողանար փրկվել ոչնչացումից, այլև դրա հաջող կենսագործումը պարտված Թուրքիային վերջնականապես դուրս կբերեր պատերազմից, և, այն ժամանակ, դժվար է թերագնահատել այն հնարավորությունները, որոնք կընձեռվեին հայ ժողովրդին՝ թուրքական դարավոր լծից ազատվելուց հետո:

Այնուամենայնիվ, Դարդանելի արշավանքն ընթացքի մեջ էր: Ռազմական ծրագրի իրականացման համար անգլո-ֆրանսիական կողմը կենտրոնացրել էր 11 գծանավ, 1 գծային և 4 թեթև հածանավեր, 16 հեծելավաշտային ականակիրներ, 7 ականազերծիչ նավ, 1 հրետանավ: Դարդանելի շրջակայքում թուրքերը, գերմանացիների հետ համատեղ, թշնամու դեմ դուրս էին բերել թուրքական I և II բանակները (200 հազար մարդ): Անգլո-ֆրանսիական 280 հրանոթներին հակակշռում էին թշնամու 200 հրանոթները: 1915թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 18-ը իրար հաջորդող գրոհները դեպի Կ.Պոլիս ավարտվեցին պատմության մեջ աննախադեպ իրադարձությամբ՝ անգլիական ռազմածովային ուժերի պարտությամբ[28]: Անգլիական ռազմածովային ուժերի լավագույն մասնագետներից մեկը, նախքան արշավանքը կասկածելի համարելով դրա հաջող ավարտը, նշել էր. «Նեղուցը չէր կրնար ճեղքվիլ, այլ մեծաթիվ մարտանավերով երկարատև գործողություններ միայն կրնային հաջողիլ», ավելացնելով, որ ձախողության պատիժը «պիտի ըլլար Արևելքի մեջ հեղինակության և ազդեցության այն մեծ կորուստը, որուն պիտի ենթարկվեր Անգլիա»[29]: Ծովակալի մարգարեությունն իրականացավ կատարյալ ճշգրտությամբ: Թե ինչպիսի տագնապ էին ապրում երիտթուրքերը փետրվարյան այն օրերին, երբ անգլիական ռազմածովային նավատորմը ռմբակոծում էր Կ. Պոլսի մատույցների թուրք-գերմանական ամրությունները, հիշատակում է Կ. Պոլսում հավատարմագրված ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն: Այդ օրերին այցելելով Թալեաթին, դիտելով նրա դեմքի վախի արտահայտությունը՝ Մորգենթաուին թվում էր, թե «Ադրիանուպոլսի նամակի ցրիչը կարծես հասած էր իր ասպարեզին վախճանին....և անգամ մը ալ հայտնեց թե՝ կը ցավեր Թյուրքիայի պատերազմին մեջ մտնելուն»: Հայոց ցեղասպանության ամենամեծագույն ոճրագործներից

---

[25] Churchill W., նշվ. աշխ., էջ 161-162:

[26] Գասպարյան Եր., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918թթ.), Ե., 2000, էջ 46-53:

[27] Նույն տեղում, էջ 51:

[28] Հարությունյան Ա.Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918թթ.), Ե., 1983, էջ 191-192:

[29] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները (այսուհետև՝ Հենրի Մորգենթաուի հուշերը), Ե., 1990, էջ 159, :

մեկին՝ Կ. Պոլսի ոստիկանապետ Բեդրիին հրահանգվել էր հավաքել քաղաքի բոլոր անգործ երիտասարդներին և դուրս տանել նրանց քաղաքից: Թուրքիայի մայրաքաղաքում թևածում էր հեղափոխության վտանգը: Համաձայն Հ. Մորգենթաուի, «Պետրի այդ հեղափոխությունն ավելի կը վախենար, քան անգլիական նավատորմիղեն»[30]:

Դեռևս պատերազմից առաջ, երբ Էնվերն այցելել էր Լոնդոն և հանդիպել Ու. Չերչիլին, վերջինս սպառնացել էր, որ եթե Թուրքիան համաշխարհային պատերազմի բռնկման դեպքում անցնի Գերմանիայի կողմը, ապա «բրիտանական նավատորմիղը պիտի անցներ Տարտանելեն և Պոլիսը պիտի գրավեր»[31]: Ու. Չերչիլը Թուրքիայի մայրաքաղաքի գրավումը դեռ վաղուց էր ծրագրում: «Չերչիլի դարգանելյան կամպանիան հիմնավորվում է երկու գործոնով. անգլո-ռուսական հին մրցակցությամբ և Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի նոր նկրտումներով»[32]: Այս տեսանկյունից հայ պատմագրության մեջ պատշաճ չի լուսաբանվել Ու. Չերչիլի՝ Հայոց ցեղասպանության և Հայկական հարցում խաղացած բացասական դերը:

Դարդանելի արշավանքից հանկարծակիի եկած Սազոնովը 1915 թ. փետրվարի 19-ին, սպառնալիքներով լեցուն նամակով, գաշնակիցներից պահանջեց անգամ վերջիններիս հարձակման հաջողության դեպքում նեղուցները հանձնել Ռուսաստանին: Այս հարցում իր համաձայնության որոշումը Անգլիան հանձնեց փետրվարի վերջին, հետևյալ պայմանով՝ նեղուցները կհանձնի միայն պատերազմից հետո և, եթե Ռուսաստանը խոստանա անգլո-ֆրանսիական կողմին բաժին հանել ասիական Թուրքիայի հետպատերազմյան ժառանգությունից: Ռուսաստանը համաձայնվեց, իսկ Ֆրանսիան հարցադրմանը միացավ միայն մարտի վերջին[33]: Բայց, ինչպես հայտնի է, արյամբ նվաճածն անարյուն չեն հանձնում, հատկապես այդ չեն անում անգլիացիները:

Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ ռազմախաղը՝ Դարդանելի ռազմական ծրագիրը, պատերազմից հետո ընդհանրացրել է պատերազմի առաջին տարիներին Անգլիայի արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյը. «Անգլիական քաղաքականությունը միշտ էլ նպատակ է հետապնդել Ռուսաստանին թույլ չտալ մոտենալու Կ. Պոլսին և նեղուցներին. մենք դրա համար պայքարել ենք Ղրիմի պատերազմում...և դա էր մեր քաղաքականության հիմնական ուղղությունը Բիքոնսֆիլդի ղեկավարությամբ....Ներկայումս Անգլիան մտադիր է զավթել Կ.Պոլիսը, այն հաշվով, որ երբ Անգլիան և Ֆրանսիան կարողանան Ռուսաստանի օգնությամբ շահել պատերազմը, խաղաղություն հաստատվելուց հետո Ռուսաստանը չստանա Կ.Պոլիսը»[34]:

Մարտի 18-ին դաշնակցային նավատորմը ձեռնարկեց իր ամենահուժկու, բայց վերջին գրոհը՝ կորցնելով 16 մարտանավերից 7-ը (3-ը ընկղմվեցին, իսկ

---

[30] Նույն տեղում, էջ 164-165:

[31] Նույն տեղում, էջ 173:

[32] Готлиб В., Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, с. 19.

[33] Արզումանյան Մ., Միջազգային դիվանագիտությունը և Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (Բաներ Հայաստանի արխիվների), Ե., 1969, N 1(22), էջ 114, նաև՝ Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917гг., М.-Л., 1939, серия III, т. VI, ч. I, N 329, с. 328-329.

[34] Grey Ed., Նշվ. աշխ., էջ 180:

4-ը վնասվեցին): Անհաջող գրոհից հետո թուրքերն ու գերմանացիները դեռ մի քանի օր սպասում էին, որ դաշնակիցների նավերը նոր գրոհներ պետք է ձեռնարկեն՝ չհավատալով, որ իրենք այդ օրը վերջնական հաղթանակ էին տարել[35]: Անվիճելի իրողությունն այն էր, որ Կ. Պոլսի մատույցները պաշտպանող ամրությունները շատ քիչ ռազմամթերք ունեին: Մարտի 18-ի երեկոյան ամերիկյան «Ասոշիեյթեդ պրեսի» թղթակից Ջորջ Ա. Շրայները, որն այցելել էր նեղուցների արհեստագիտական գլխավոր պաշտոնատար զորավար Մարտենսին, հավաստիացել էր, որ եթե մարտի 19-ին անգլիացիները կրկնեին գրոհը, ապա այդ օրն իսկ տոնելու էին հաղթանակը Կ.Պոլսի փողոցներում: «Համիտիե ամրոցը, որ ասիական եզերքին պաշտպանողական ամենեն հզոր դիրքն էր, զրահ ծակող տասնյոթը ռումբ միայն ուներ. մինչդեռ Քիլիտ-յուլ-Պահրը, որ եվրոպական եզերքին պաշտպանողական գլխավոր դիրքն էր ճիշտ տասը ռումբ ուներ»[36]:

Բայց անգլիական նավատորմը երբեք չվերադարձավ:

Անդրադառնալով Քիթչենների ծրագրին՝ անգլիացի Բարկերը պնդում է, որ եթե այն իրականացվեր, Օսմանյան կայսրության փլուզումը կատարված փաստ կլիներ արդեն 1915թ. վերջին: Այս դեպքում չէին լինի Դարդանելի և Գալիպոլիի զոհերը, տեղի չէին ունենա հայկական կոտորածները, անհրաժեշտ չէր լինի զոհաշատ կռիվներ մղել Միջագետքում Դազայի կամ Պաղեստինի համար: Գերմանացի ֆելդմարշալ Հինդենբուրգը նույնպես զարմանքով էր նկատել, թե ինչու Եոյակ տերությունները չօգտվեցին Ալեքսանդրեթի թույլ օղակին հարվածելու հնարավորությունից՝ պարտության մատնելով Թուրքիային: «Այսպես վարվելու դեպքում նրանք կկարողանային կտրել Թուրքիայի անդրտավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը և հանդերձանքն ու սպառազինությունն ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ կովկասյան բանակներին»: Հինդենբուրգը գրում է, որ Ալեքսանդրեթի ծովածոցը պաշտպանված չէր: Թուրքերը եղած ուժերը ուղարկել էին Սիրիա և Միջագետք: Այս մասին Էնվերը խոստովանել էր Հինդենբուրգին, որ իր միակ հույսն այն էր, որ «թշնամին չբացահայտեր մեր թուլությունը հենց այդ կրիտիկական կետում»[37]: Թշնամին, անշուշտ, քաջատեղյակ էր և թույլ կետերին և Դարդանելի պարտության հեռանկարին: Նրան հետաքրքրում էր միայն Օսմանյան կայսրության ժառանգությանը տիրանալը, Ռուսաստանին այդ ժառանգությունից որքան հնարավոր է հեռու պահելը և այս տեսանկյունից հայ կյանքը նրա համար որևէ նշանակություն չուներ:

Կեղծիքով էր տոգորված Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանդենհայմի՝ 1914թ. օգոստոսի կեսերին ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի՝ Թուրքիայում քրիստոնյաների ջարդի վտանգի ահազանգին հղած պատասխանը, որ «Քանի դեռ Անգլիան չի գրոհում Դարդանելը կամ որևէ թուրքական նավահանգստային քաղաք, անհանգստանալ պետք չէ....Հակառակ դեպքում ոչինչ հնարավոր չէ երաշխավորել»[38]: Իրականում, Դարդանելի պարտությունն էր, որ կանաչ ճանապարհ բացեց թուրք ջարդարարների համար՝ սկսելու հայ ազգի բնաջնջման

---

[35] Հենրի Մորգենթաուի հուշերը, էջ 186-187:

[36] Նույն տեղում, էջ 188:

[37] Barker A. J., The Mesopotamian Campaign of 1914-1918. The Bastard War, New York, 1967, p. 410.

[38] Օհանջանյան Ա., 1915 թվական: Անհերքելի վկայություններ, ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, Ե., 1997, էջ 80:

նախօրոք ծրագրած իրենց դիվային մտահղացումների կենսագործումը: Արշավանքի ականատես ամերիկյան դիվանագետ Լուիս Էյնշտեյնը նշում է, որ երիտթուրքերը Դարդանելից հետո պահը հարմար համարեցին իրենց հակահայկական քաղաքականության իրականացման համար[39]:

Այն, որ Դարդանելում թուրքերի հաղթանակը վերջնականապես նրանց խրախուսեց Հայոց ցեղասպանության ծրագրի արագացման համար, հաստատում են մի շարք արևմտյան հեղինակներ: Այսպես, օսմանյան պատմության պատմագիրներից լորդ Քինրոսը գրում է. «Գալիպոլիում անգլիական զորքերի կրած անհաջողությունը երիտթուրքական եռյակին հնարավորություն ընձեռեց, չվախենալով արտաքին միջամտությունից, հետևելու նախապես մշակված քաղաքականությանը՝ հայ ազգի վերացմանը»[40]: Դրան ի լրումն՝ Հ.Գիբբոնսի խոսքը. «Դաշնակիցների կողմից Դարդանելի պաշարման սկզբին Կ. Պոլսում բոլորը գիտեին, որ հասել է ժամանակը, երբ հայ ազգի՝ արդեն վաղուց հաստատված և միայն ժամանակավորապես Ռ. Դոան և սերասկերատի արխիվներում թաքցված մահվան դատավճիռը վերջապես ի կատար կածվի»[41]: Ողբերգական է, բայց փաստ, որ Արևմտյան Հայաստանում Թուրքիայի հայաբնակ տարածքներում իրականացվող տեղահանությունների և կոտորածների ամենաթեժ պահին մեծ թվով հայ զինորներ թուրքական բանակի շարքերում կռվում և զոհվում էին Դարդանելի շրջանի մարտերում՝ հանուն իրենց մայրերին ու քույրերին պատվազրկած և սրի քաշած պետության[42]:

Կ.Պոլիսը գրավելու անգլո-ֆրանսիական առաջին փորձից հետո էլ, երբ ընդհուպ մինչև 1915թ. վերջը ֆրանսիական կողմի հետ անգլիացիները քննարկում և մերժում էին Ալեքսանդրեթի ծովածոց ափհանումը, երբ ցեղասպանությունն արդեն իր վայրագ զարգացման փուլում էր, դասեր չքաղելով Դարդանելի շրջանում կրած առաջին պարտության հետևանքներից՝ անգլիացիները ձեռնարկեցին նույնաբնույթ երկրորդ արկածախնդրությունը:

1915թ. ապրիլի 25-ից մինչև 1916թ. հունվարի 9-ը դաշնակիցները Թուրքիայի դեմ Կ.Պոլսի մատույցներում պլանավորում և իրականացնում են երկրորդ արշավանքը: Սուվլայի և Գապա-Թեպեի շրջաններում օգոստոսի 7-8-ին դեսանտ են հանում (մոտ 10 000 մարդ): Մի քանի ամիս տևած կատաղի մարտերում գերմանա-թուրքական միացյալ ուժերը կրկին հաղթանակ են տանում[43]:

Դարդանելի ռազմական գործողությունների ժամանակ անգլիացիներն իրենց 400 հազար զորքից կորցրեցին 120 հազարը (չհաշված հնդիկներին): Թուրքիան կորցրեց 218 հազար զինվոր, այդ թվում՝ 66 հազար սպանված[44]: Այս խայտառակության հեղինակներից մեկը՝ Ու. Չերչիլը հետագայում իր բազմահատորյա հուշերում Հայոց ցեղասպանության իրականացման խթանման

---

[39] Einstein Lewis, Inside Constantinople. Former Minister Plenipotentary of United States Diplomatic Service, New York, 1918, p. 7.

[40] Մեջբերումը տե՛ս Սահակյան Ռ., Հայոց ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 254, նաև՝ Lord Kinross, The Ottoman Centuries. The Rise and the Fall of the Ottoman Empire, London, 1977, p. 607.

[41] Гиббонс Г.А., Последние избиения в Армении, Петроград, 1916, с. 26.

[42] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., էջ 326, նաև՝ Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 3:

[43] Հարությունյան Ա.Հ., նշվ. աշխ., էջ 192:

[44] Готлиб В., նշվ. աշխ., էջ 182:

գործում ռազմարշավանքի խաղացած դերի մասին կատարեց հետևյալ խոստովանությունը. «Ոչ մի կասկած չկա, որ այդ հանցագործությունը մշակված էր քաղաքական նկատառումներով: Թուրքերը ժամանակը գտան հարմար...երկիրը մաքրելու քրիստոնեական ռասայից....Լիովին հնարավոր է, որ Գալիպոլի թերակղզու բրիտանական գրոհն էլ ավելի ուժեղացրեց թուրքական կառավարության կատաղությունը»[45]: Սա, իհարկե, հետագայում կատարված խոստովանություն էր, իսկ 1915-1916թթ. իրականությունն այն էր, որ ցեղասպանության ընթացքում ոչ միայն Ու. Չերչիլը, այլև անգլիական քաղաքական գործիչները շարունակում էին եղեռնի ենթարկվող ժողովրդի մոլորեցման և ոճրի ուրացման ապագա գործընթացի սկզբնավորումը: Այդ ուրացումը դրսևորվեց Թուրքիայի դեմ իրականացվող ռազմական գործողությունների ողջ ընթացքում և սերտորեն կապված է հայ ժողովրդի կամավորական շարժման միջոցով, սեփական ուժերով ինքնափրկման իղձերի և այդ ձգտումները կաչկանդող բրիտանական ռազմադիվանագիտության նպատակների հետ:

Պողոս Նուբարի՝ հայ կամավորական շարժում կազմակերպելու առաջարկի հետ գրեթե միաժամանակ նմանատիպ ծրագրեր սկսեցին առաջ քաշել անգլիական իշխանությունների առջև տարբեր երկրներում բնակվող հայ ժողովրդի զավակները: Դրանք ուղղված էին ոչ միայն ցեղասպանության ենթարկվող հայրենակիցների փրկությանը այլև օսմանյան Թուրքիայի դեմ կռվող Անտանտի հաղթանակին իրենց նպաստը բերելուն:

1915թ. ապրիլին ԱՄՆ-ում Անգլիայի դեսպան Սպրինգ Ռայսը ԱՄՆ-ում ռուսական դեսպանի միջոցով տեղեկացավ, որ հայերը առաջարկում են Կանադայի միջոցով 1000 կամավորներ ուղարկել մասնակցելու «Կիլիկիայում իրականացվող ռազմական գործողություններին»: Կամավոր «հայերը պատրաստ էին վճարել ռազմական հանդերձանքի և կանադական նավահանգիստ փոխադրվելու համար», այն հույսով, որ անգլիացիները կօգնեն իրենց տեղափոխվել Կանադայից Կիլիկիա: Ապրիլին 25-ին Ֆորին օֆիս ուղարկված[46], իսկ ապրիլի 26-ին պատերազմական խորհրդի քննարկմանը դրված այս առաջարկը անգլիական ռազմադիվանագիտության կողմից մերժվեց[47]: Անգլիական կառավարությանն ուղղված նմանատիպ կոչերն ու ուղերձները, առաջարկներն ու աղերսանքը շարունակվեցին Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության ողջ ընթացքում: 1915թ. հուլիսին Ամերիկայի Ազգային պաշտպանության հայկական կոմիտեն, Եգիպտոսում անգլիական բանակի գլխավոր հրամանատար Ջոն Մաքսվելին «նկարագրելով Կիլիկիայում ստեղծված իրավիճակն ու ներկայացնելով Փոքր Ասիայի որոշ մասերում բրիտանական ռազմական գործողությունների իրականացման» նախապատվությունը, առաջարկում էր այդ գործին զինվորագրել եգիպտահայերին, որոնք հազարներով պատրաստ են կամավորագրման և պատերազմ մեկնելուն[48]: Ազգային պաշտպանության հայկական կոմիտեն, համաձայն Եգիպտոսում անգլիական գերագույն կոմիսար Հենրի Մակմահոնի, «այլևս չկարողանալով տանել հայերի ամենօրյա կոտորածների մասին ստացվող լուրերը, թույլտվություն էր խնդրում ուժերը կենտրոնացնելու Կիպրոսում և

---

[45] Черчилль У., Мировой кризис, М.-Л., 1932, с. 237, մեջբերումն ըստ՝ Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 305:

[46] Foreign Office (այսուհետև՝ FO), 371/2485/49516.

[47] FO 371/2485/51438, նաև՝ FO 371/2485/51430/folio 15.

[48] FO 371/2485/100762.

ափհանում կատարելու Մերսինում»: Հայերի կարծիքով, Կիլիկիայում իրականացվելիք հայկական ռազմական գործողությունները կաթվածահար կանեին թուրքական յուրաքանչյուր զինվորական կարգի տեղաշարժը Փոքր Ասիայում: Անգլիացիներին առաջարկվում էր զինել 10 հազար հայ մարտիկների[49]:

Դեպի Կիլիկիա հայկական արշավանք կազմակերպելու նույն առաջարկությունը Անգլիայի արտաքին գործերի նախարարությունում ստացվեց հուլիսի 19-ին՝ այս անգամ Լոնդոնում ռուսական դեսպանության միջոցով[50]: Իայց անգլիական դիվանագիտությունը հետամուտ էր հայերին այլ նպատակներով օգտագործելուն, նրան ոչ մի առումով ձեռնտու չէր զինված հայերի միավորումներ ստեղծելը, այն էլ իր հովանո ներքո: Այդ զենքը մի օր կարող էր շուռ գալ իր դեմ: Այդ էր պատճառը, որ օգոստոսի 24-ին արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյը խիստ հրահանգավորեց Եգիպտոսի անգլիական իշխանություններին՝ որևէ կերպ ընթացք չտալ Կիլիկիայում հայերի կամավորական շարժմանը[51]: Էդ. Գրեյը քաջատեղյակ էր ամերիկահայերի շրջանում ծնված կամավորական շարժման գաղափարին ոչ թե Լոնդոնի և Վաշինգտոնի ռուսական դեսպանների շնորհիվ, այլ Ամերիկայի Ազգային պաշտպանության հայկական կոմիտեի՝ դեռևս 1915թ. մարտի 23-ին անձամբ իրեն հասցեագրված նամակից: Այդ այն ժամանակն էր, երբ անգլիական նավատորմը մի քանի օր էր, ինչ ջախջախվել էր Բոսֆորի ափին, և կրկին անգլիական կառավարության առջև, որպես այլընտրանք, բարձրացվել էր Քիթչենների՝ Ալեքսանդրեթի ծովածոցում արշավանք նախաձեռնելու ծրագիրը: Նախարարը դիմում առաջարկով տեղեկացվել էր, որ կոմիտեն արդեն ձեռնամուխ է եղել կամավորական խմբերի ստեղծմանը և Կիլիկա ուղարկելուն: Կոմիտեի նախագահ Լևոն Միհրանյանի կարծիքով, հայերի կողմից Կիլիկիայում սկսվելիք ռազմական գործողությունները խափանելու էին թուրքերի հնարավոր արշավանքը Եգիպտոս և վերացնելու էին Եգիպտոսում անգլիացիներին սպառնացող վտանգը: Քիթչենների հետ ընդհանուր շատ դրույթներ ունեցող այս ծրագիրը հանգում էր Ալեքսանդրեթի ծովածոցում ռազմական գործողությունների իրականացմանը[52]: Անգլիական իշխանություններին ուղղված այս և նմանատիպ տասնյակ դիմումները դատապարտված էին կամ լռության մատնվելուն, կամ մերժվելուն: Նմանատիպ, թերևս ավելի բացասական վերաբերմունքի արժանացան միջերկրածովափի սուեդահայերի առաջարկները:

1915թ. հուլիսին Անտիոքի ծովախորշի մերձակայքի վեց հայկական գյուղերի բնակիչները, թուրքական իշխանություններից ստանալով տեղահանման մասին որոշումը և լավատեղյակ լինելով սպասվող աղետալի հետևանքներին, որոշեցին ընդդիմանալ և ինքնապաշտպանության նպատակով հանդրվանեցին Միջերկրականի ափին գտնվող Մուսա լեռան բարձունքներում: Հուլիսից սեպտեմբեր շուրջ 5000 սուեդահայերի մղած ինքնապաշտպանական հերոսական մարտերը թշնամու գերակշիռ ուժերի պատճառով մոտենում էին իրենց տխուր վախճանին: Փրկության միակ հույսը ծովում դեգերող Անտանտի երկրների ռազմանավերն էին[53]: Փրկություն աղերսող բազմաթիվ նամակներն ու սուրհանդակները, որոնք ուղարկվում էին անգլիական ռազմանավեր և իշխա-

[49] FO 371/2485/100769.
[50] FO 371/2485/112136/15.
[51] FO 371/2485/115866/15.
[52] FO 371/2485/41444.
[53] Барби Анри, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919, с. 64.

նություններին, մնում էին անպատասխան: Ավելի քան 4000 մուսալեռցիներ փրկվեցին միայն սեպտեմբերի 14-ին, ֆրանսիացիների կողմից և տեղափոխվեցին Անգլիայի ենթակայության տակ գտնվող՝ Եգիպտոսի Պորտ-Սայիդ նավահանգիստ[54]: Անգլիացիները Մուսա լեռան հայերին սպառնացող վտանգի մասին Լոնդոնում տեղեկացվեցին 1915թ. օգոստոսի 10-ին, Հ. Մակմահոնի կողմից: Վերջինս դեռևս օգոստոսի 7-ին, Կիպրոսում անգլիական գերագույն կոմիսարից ծանուցվել էր, որ «6000 հայեր քաջաբար կռվում են թուրքերի դեմ Ջեբել Մուսայում Անտիոքի ծովածոցի մոտ: Ծովակալը (Սիրիական ծովածոցի ֆրանսիական ծովակալը-Տ. Ս.) բավարարել է նրանց խնդրանքը՝ ապահովելով պարենով և զինամթերքով: Բայց նրանք խնդրում են 5 հազար ծերերի, կանանց և երեխաների փոխադրումը Կիպրոս»: Կիպրոսի Գերագույն կոմիսարը, «քաղաքական տեսանկյունից անցանկալի համարելով» ապստամբ հայերին «Կիպրոսի թուրք և քրիստոնյա խառը բնակչության մեջ բնակեցումը», անհնարին էր համարում նրանց ապաստան տալը[55]: Մուսալեռցիներին Եգիպտոսում ապաստան տրամադրելը մերժեց նաև Հ. Մակմահոնը[56]: Լոնդոնի, Եգիպտոսի և Կիպրոսի քաղաքական իշխանություններին հակադիր կեցվածք բռնեց գեներալ-մայոր Ջ. Մաքսվելը, որը լորդ Քիթչեներին հղած գաղտնի հեռագրում խորհուրդ էր տալիս ամեն կերպ աջակցել հայերի հակաթուրքական շարժմանը, մուսալեռցիներին տեղափոխել Հռոդոս կամ Կիպրոս կղզիներ և դրանով չեղել թուրքերի ուշադրությունը Դարդանելից: Ջ. Մաքսվելը ցանկալի էր համարում մուսալեռցիներին ընդունելու նպատակով Կիպրոսի իրենց իշխանությունների նկատմամբ որոշակի ճնշում գործադրելը[57]: Կիպրոսն այն կղզին էր, որը չուրջ կես դար առաջ պատճառ էր դարձել հայի կյանքը բարելավելուն՝ միտված Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի կոնֆերանսում անգլիացիների կողմից 61-ով փոխարինելուն, օսմանյան Թուրքիայի տարածքային անձեռմխելիությունը անգլիական երաշխիքին տրամադրելուն և հետագայում հայերի ոչնչացման քաղաքականության սկզբնավորմանը: Մինչև սեպտեմբերի 14-ը Լոնդոնից որևէ պատասխան չստացվեց:

Ֆրանսիական ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն, չունենալով ոչ մի դրական պատասխան, այդ թվում և իր կառավարությունից, իր անձնական պատասխանատվությամբ Մուսա լեռան վրա հանգրվանած ժողովրդին հրամայում է փոխադրել ֆրանսիական հինգ մարտանավերը՝ «Գիշեն», «Դեզե», «Ֆուդր», «Լ'ադմիրալ Շարնե», «Էստրե»[58], որոնք էլ հայերի համար դարձան փրկության միակ տապանները:

Լոնդոնից պատասխանը ստացվեց սեպտեմբերի 14-ին, այն նույն օրը, երբ ֆրանսիացիները մուսալեռցիներին տեղափոխել էին անգլիական Պորտ Սայիդ նավահանգիստը: Կահիրե և Փարիզ Լոնդոնից հղած հեռագիրը որքան ապշեցուցիչ, այնքան էլ անմարդկային էր: Դրանով Նորին մեծության կառավարությունը մերժում էր մուսալեռցի վերապրածներին իրեն ենթակա որևէ երկրում, որևէ տարածքում ապաստան տրամադրելը: Ավելին, Փարիզ հղած նամակով անգլիացիները խորհուրդ էին տալիս ֆրանսիական կառավարությանը հայերին տեղափոխել Այժիր[59]: Հիասթափությունը մեծ էր Լոնդոնում, երբ իմացան, որ

[54] Ցուչամաեան մեծ եղեռնի, 1915-1916, Պեյրութ, 1965, էջ 774:
[55] FO 371/2490/129419.
[56] FO 371/2490/129497/129419.
[57] FO 371/2490/130257.
[58] Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 188:
[59] FO 371/2490/131046.

մերժման օրը գաղթականները ապաստան էին գտել Եգիպտոսի Պորտ Սայիդ նավահանգստում: Կացարաններում գիշերող հիվանդ ծերունիները, կանայք, երեխաներն անտեղյակ էին, որ փրկության օրվա գիշերը, Լոնդոնից հղած հեռագրերում անգլիացի դիվանագետները Փարիզից պահանջում էին սուեզահայերին Պորտ Սայիդից որևէ այլ տեղ տեղափոխել, միայն թե՝ անգլիական ենթակայությունից դուրս՝: Բարեբախտաբար, անգլիացիների այս պահանջը որևէ ընթացք չստացավ:

Ինքնապաշտպանական մարտերում կոփված անկոտրում մուսալեռցիները փրկությունից մի քանի օր անց՝ սեպտեմբերի 19-ին, Եգիպտոսի զինված ուժերի գլխավոր հրամանատարին առաջարկեցին տրամադրել 600 կամավորներ, զենք ու զինամթերք ստանալուց հետո ֆրանսիական նավերով տեղափոխվել Փոքր Ասիայի կամ Սիրիայի որևէ վայր՝ շարունակելու իրենց պայքարն ընդդեմ թուրքերի: Սեպտեմբերի 21-ին Լոնդոնից լորդ Քիթչեներից ստացվեց հետևյալ պատասխանը. «Ֆորին օֆիսը կարծում է, որ հայերի նախաձեռնության ոգի պատասխանատվությունն ու նախապատրաստությունը պետք է թողնվի ֆրանսիացիներին»[61]: Քանի որ եգիպտական իշխանությունները մինչև հոկտեմբերի կեսը պատասխան չստացան ֆրանսիացիների դիրքորոշման վերաբերյալ, ուստի առաջացավ հայ գաղթականներին Գալիպոլի տեղափոխելու և այնտեղ ջինարարական ջոկատներում շահագործելու գաղափարը[62]: Բարեբախտաբար, այս ծրագիրը նունպես կյանքի չկոչվեց:

Ֆրանսիան միայն 1916թ. սեպտեմբերին հաջողեց ձեռք բերել հայ կամավորներին Կիպրոսում մարզելու վերաբերյալ Անգլիայի համաձանությունը: Այդ գործին իր ակտիվ մասնակցությունը բերեց Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը: 1916թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում նրա, Ժ. Պիկոյի և Մ. Սայքսի հանդիպման ժամանակ հստակեցվեցին հայ կամավորներից ֆրանսիական բանակում Արևելյան (Հայկական) լեգեոնի ստեղծման վերջնական մանրամասները: Ըստ այդ համաձայնության, Արևելյան լեգեոնը հետագայում դառնալու էր Կիլիկիայում ստեղծվելիք հայկական բանակի կորիզը[63]: Հայ տարագիրներից Կիպրոսում լեգեոն կազմակերպելու ֆրանսիական կառավարության պաշտոնական որոշումը կայացվեց 1916թ. նոյմբերի 28-ին[64]: Արևելյան լեգեոնի կորիզը կազմեցին այն 600 մուսալեռցիները[65], որոնք մեկ տարուց ավելի ակնկալում էին անգլիական իշխանությունների թույլտվությունը կռվելու և մեռնելու իրենց հայրենակիցներին մահվան գահեն ու անապատներն ուղարկող պետության դեմ:

Մուսալեռցիների նկատմամբ անգլիական քաղաքական կեղծարարության ու հայագավ վերաբերմունքի սքողման փորձը հասավ այն աստիճանի, որ 1915թ. վերջին անգլիական պառլամենտում տեղի ունեցած քննարկումներից մեկի ժամանակ արտաքին գործերի փոխնախարար լորդ Ռ. Սեսիլն ասաց. «Կառավարությանն ուղղված մեր խնդրանքներից մեկը եղել է այն, որ բրիտանական բանակներն ու

[60] FO 371/2490/131502/129419.

[61] FO 371/2490/147496/129419.

[62] Նույն տեղում:

[63] Սահակյան Ռ. Հ., Թուրք-հայկական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Ե., 1970, էջ 113, նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 561:

[64] Գարամանուկյան Ա., Հայկական լեգեոնը. պատմական, իրավական և քաղաքական հարցերու լույսի տակ և վավերագրեր, Պեյրութ, 1974, էջ 42:

[65] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 562:

նավերը պետք է, որտեղ որ հնարավոր է, անեն ամեն հնարավորը փրկելու այն հայերին, որոնք մազապուրծ են եղել կոտորածներից, ինչպես գա արել են ֆրանսիական նավերն այն 4000 հայերի նկատմամբ, որոնց հնարավորություն է ընձեռվել ափհանել Եգիպտոսում»: Իբր թե «նման կարգի հրահանգներ արդեն ուղարկվել են» նաև անգլիական զինված ուժերին[66]: Հայոց ցեղասպանությունից չուրջ ինը տասնամյակ անց, հենվելով անգլիական արխիվային փաստաթղթերի վրա, վստահորեն կարող ենք ասել, որ լորդ Սեսիլը հրապարակայնորեն ստում էր:

Անգլիական զինվորական հետախուզության ղեկավար, գեներալ-մայոր Մակդոնոգը առաջարկում էր մուսալեռցիներին, նախքան Արևելյան լեգեոնի կազմակերպումը, որպես ջորեպաններ ուղարկել Սալոնիկ՝ այս մարդկանց մեջ ընգրկելով այն 179 հայ ռազմագերիներին, որոնք գերեվարվել էին Թուրքիայի դեմ Անգլիայի մղած ռազմական գործողությունների ընթացքում և որպես ռազմագերիներ արգելափակվել Հնդկաստանի բանտերում[67]: Հայ ռազմագերիներին ազատ արձակելու պատրաստակամության վերաբերյալ Հնդկաստանի կառավարության համաձայնությունը ստացվեց 1916թ. հուլիսի 17-ին[68]. նրանք պետք է ընգրկվեին Կիպրոսում ստեղծվելիք հայկական զորամիավորման մեջ: Նմանատիպ դիմում ամերիկահայ կազմակերպությունների կողմից եղել էր 1916թ. հունիսի 8-ին: Ըստ այդմ, Հնդկաստանի Սումերպուր քաղաքում արգելափակված հայ ռազմագերիները անգլիական իշխանություններին խնդրում էին իրենց ընդգրկել Միջագետքում գործող անգլիական բանակի շարքերը կամ, «եթե դա անցանկալի էր, միանալու Կովկասի հայ կամավորներին»[69]: Իսկապես, պատերազմական նախարարությունը այդ ռազմագերիների ծառայությունը համարեց «անցանկալի»[70]: Ուշագրավ է, որ Սալոնիկում որպես ջորեպաններ ծառայելու՝ Եգիպտոսում անգլիական իշխանությունների առաջարկին մուսալեռցիները պատասխանեցին անտարբերությամբ: Ներքին գործերի նախարարություն հղած զեկուցագրերից մեկում եգիպտական ղեկավարությունն այս փաստը բացատրում էր նրանով, որ մուսալեռցիները «կաշառվել էին հայ հոգևորականների և քաղաքական գործակալների կողմից»: Ընդհուպ մինչև 1916թ. սեպտեմբերի վերջերը անգլիացիները հիմնախնդիր էին համարում սուեզահայերին Միջերկրական ծովափի՝ արդեն ֆրանսիացիների կողմից նվաճված տարածքներում վերաբնակեցնել[71]: Հակառակ հայագավ այս դիրքորոշման, 1916թ. հոկտեմբերին անգլո-ֆրանսիական կառավարությունների միջև կայացած՝ Կիպրոսում Արևելյան լեգեոն ստեղծելու մասին համաձայնությամբ, հաջողվեց զորամիավորման մեջ ընդգրկել նաև Հնդկաստանում գտնվող թուրքահպատակ հայ ռազմագերիներին: Հնդկաստանի գործերով նախարարությունը նրանց ազատ արձակման համաձայնությունը տվեց 1916թ. հոկտեմբերի 24-ին[72]:

Ընդհանրացնելով Հայոց ցեղասպանությանը նախորդող շրջանի և նրա ընթացքում անգլիական ռազմադիվանագիտության դրսևորած փաստավավերագրական նյութը՝ պետք է նշել, որ եթե անգամ իրականացվեր Հ.Բիթչենների՝ Ալեքսանդրեթի ծովածոց ափհանումը և այդ ուղղությամբ ռազմական գործողու-

[66] The New York Times, 9. XII. 1915, նաև՝ FO 371/2488/172811.
[67] FO 371/2769/167600/6.
[68] FO 371/2769/172707/12.
[69] FO 371/2769/13.
[70] FO 371/2769/14.
[71] FO 371/2769/27-28.
[72] FO 371/2769/214212/51.

թյունների նախաձեռնումը, որն իրավամբ փրկարար նշանակություն կունենար հայ ժողովրդի Միջագետքի անապատներում դեգերող վերապրող մասի փրկության համար, հայ կամավորական շարժմանն այդ առնչությամբ անգլիացիների կողմից որևէ դեր չէր վերապահվում: Դրա հաջող իրականացման դեպքում, եթե անգամ չկանխվեր հայ ժողովրդի դեմ իրականացվող ոճիրը, ապա առնվազն կնվազեցվեին դրա չափերը: Պատմական ճշմարտությունն այն է, որ ինչպես Ալեքսանդրեթի շրջանում անգլիացիների կողմից ռազմական գործողություններ վարելը, այնպես էլ հայ կամավորական շարժման խթանումն ամեն կերպ հակասում էին Մերձավոր արևելքում վերջնական գերիշխանության հաստատման ձգտող անգլիական դիվանագիտության շահերին[73]: Այս փաստը բացատրվում է տարածաշրջանում անգլո-ֆրանսիական մրցակցությամբ և տարաձայնությամբ: Այս է պատճառը, որ 1916թ. նոյեմբերին դժվարությամբ ստեղծված Արևելյան լեգեոնը պատերազմական գործողություններին մասնակցեց միայն 1918թ. սեպտեմբերի 19-ից, այն էլ Պաղեստինի ճակատում[74]: Պատերազմում Թուրքիայի պարտությանը մնացել էր մեկ ամսից քիչ ավելի, իսկ նրա տարածքում բնակվող հայ տարրը «հայասեր» Անգլիայի աջակցությամբ արդեն ոչնչացված էր:

ГЕНОЦИД АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ВОЕННАЯ ДИПЛОМАТИЯ ВЕЛИКОБРИТАНИИ (1915-1916гг.)

САРУХАНЯН Т.Н.

Резюме

Англия выработала два альтернативных плана военно-морской экспедиции против Турции, первым из которых была Дарданельская экспедиция, открывавшая зеленый путь младотурецкой администрации для осуществления давно уже выработанного ею плана – истребления армян. Закончилась эта экспедиция беспрецедентным в истории Англии результатом: поражением английского непобедимого военно-морского флота.

По второму плану намечалась высадка десанта в Александретском заливе. С этим планом были созвучны идеи и программы многих армянских общественно-политических кругов. Справедливости ради нужно отметить, что осуществление этого второго плана могло бы иметь решающее, если не предотвращающее значение в вопросе геноцида армян. Однако английская военно-политическая верхушка предпочла первый план У. Черчилля-Л. Джорджа, отклонив план Военного министра Великобритании Г. Китченера. Более того, на протяжении всей Первой мировой войны английская военная дипломатия не только не способствовала армянскому добровольческому движению, а наоборот, всеми возможными методами препятствовала ему. Это подверждается нововыявленными английскими архивными документами.

---

[73] Դասպարյան Ե. Ա., Ֆրանսիան և Մեծ եղեռնը, Ե., 1997, էջ 28:

[74] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 562: